ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. սեպտեմբերի 7-ից 8-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի և 2021թ. սեպտեմբերի 7-ից 10-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական Արմեն Գևորգյանի Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

- Վահե Հովհաննիսյան,
- Արմեն Գևորգյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

- Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2021թ. սեպտեմբերի 7-ից 8-ը ներառյալ
- Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2021թ. սեպտեմբերի 7-ից 10-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

ՌԴ ֆինանսների նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Մոսկովյան ֆինանսական ամենամյա համաժողովին, հանդիպումներ ՌԴ ֆինանսների նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ

6. **Քննարկված թեմաները՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալը և ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդականը մասնակցել են Մոսկովյան ֆինանսական համաժողովին (այսուհետ՝ Համաժողով): Համաժողովը եզակի հարթակ է հանդիսանում ֆինանսական ոլորտի մասնագիտական քննարկումների համար, որոնք միտված են Ռուսաստանի Դաշնության տնտեսական քաղաքականության և ֆինանսական երկարաժամկետ կայունությանը: Այս տարի այն նվիրված էր ՌԴ հետագա տարիների տնտեսական զարգացման ռազմավարական խնդիրներին: Համաժողովի շրջանակներում իշխանության, բիզնեսի, մասնագիտական և փորձագիտական համայնքների ներկայացուցիչները բաց եկրկխոսության ձևաչափով քննարկեցին ֆինասատնտեսական հատվածի առանցքային հարցերն ու հիմնախնդիրները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մոսկվա կատարած այցի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ՝ Տիմուր Մաքսիմովի, ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ՝ Ալեքսեյ Լավրովի և ՌԴ ֆինանսների նախարարության ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Վլադիմիր Նազարովի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Տ. Մաքսիմովի՝ որպես ՌԴ ՖՆ արտահանման վարկային ծրագրերի և միջազգային դրամաշնորհային ծրագրերի համակարգողի հետ քննարկվել են երկու գերատեսչությունների միջև համագործակցության ակտիվացման հնարավորությունները և գործակցության նոր հեռանկարները:
- Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների համագործակցության ակտիվացման նպատակով համապատասխան ստորաբաժանումների միջև կապերի թարմացման և հարաբերությունների սերտացման շուրջ՝ հիմնված համատեղ օրակարգի ձևակերպման վրա:
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել տարբեր միջազգային հարթակներում միմյանց աջակցելու և միասնաբար հանդես գալու հնարավորության իրագործման վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Վերոնշյալ պայմանավորվածությունները կյանքի կոչելու նպատակով ս.թ. հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին նախատեսվում է ՌԴ պատվիրակության այց Հայաստանի Հանրապետություն: Այցի օրակարգի հետ կապված հարցերը դեռևս ենթակա են հստակեցման:

ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Լավրովի հետ, ով ՌԴ ՖՆ-ում համակարգում է բյուջետային գործընթացը, քննարկվել են ժամանակակից բյուջետային գործընթացի լավագույն փորձի ուսումնասիրմանը և այդ ոլորտում առկա հիմնախնդիրներին առնչվող այլ հարակից հարցեր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագայում նույնպես շարունակել գործակցությունը տեղեկատվության և փորձի փոխանակման ուղղություններով, ինչպես նաև նմանօրինակ ձևաչափով քննարկումներ կազմակերպել ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ներգրավմամբ: Նման խորհրդակցությունների մեկնարկի համար, որպես նախնական ժամկետ նախանշվել է 2022թ. փետրվարը:

ՌԴ ֆինանսների նախարարության Ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Վ. Նազարովի հետ քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության Ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ ծրագրի ընթացքին առնչվող հարցեր: Երկուստեք ընդգծվել է ծրագրի կարևորությունը:

Քննարկման արդյունքներով ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ծրագրի հետագա շարունակականության ապահովման ուղղությամբ: Միաժամանակ քննարկվել է վերոնշյալ ծրագրում ՀՀ այլ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավման հարցը:

9. Գործուղվողը՝

- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյան
- ՀՀ ֆինանսերի նախարարի խորհրդական Արմեն Գևորգյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

10.09.2021թ.